



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ -ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման վերաբերյալ

Սույնով տեղեկացնում ենք, որ **2019 թվականի նոյեմբերի 28-ին** «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է իրականացնել անվանական արժեկտրոնային դրամային և դոլարային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով:

Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն, իսկ թողարկվող պարտատոմսերի ցուցակումից հետո վերջինս իրականացնելու է նաև շուկա ստեղծողի (market maker) գործառույթներ:

Պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում 2019թ.-ի հոկտեմբերի 30-ին: Ազդագրի էլեկտրոնային տարբերակը հրապարակված է «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքերում, համապատասխանաբար՝ www.globalcredit.am և www.renesa.am հասցեներով:

Թողարկման հիմնական պայմանները ներկայացվում են ստորև.

ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ - ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Պարտատոմսերի դասը	Անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերերի շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով	
Պարտատոմսերի տեղաբաշխման եղանակը	Չերաշխավորված	
Թողարկման ընդհանուր ծավալը	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար	500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը (արժույթը)	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	10,000 (տասը հազար) հար	50,000 (հիսուն հազար) հար



Արժեկտրոնային եկամտաբերությունը	6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) % տարեկան	9 (ինը) % տարեկան
Արժեկտրոնային եկամուտների վճարումը	Կիսամյակային պարբերականությամբ	
Ուղղորդիչ նվազագույն գին¹	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Շրջանառության ժամկետը	24 ամիս	12 ամիս
Տեղաբաշխման օրը	28.11.2019թ.	
Տեղաբաշխման սկիզբը	28.11.2019թ. ժամը 11:00	
Տեղաբաշխման ավարտը	28.11.2019թ. ժամը 13:30	
Մարման օրը²	28.11.2021թ.	28.11.2020թ.

Պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չկան: Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցել ցանկացողները կարող են դիմել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի անդամ հանդիսացող ընկերություններին, որոնց ցանկն ու կոնտակտային տվյալները ներկայացված են www.amx.am ինտերնետային կայքում: Պարտատոմսերում ներդրում կատարելու համար անձինք պետք է նախապես դիմեն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներին՝ նրանց միջոցով արժեթղթերի դեպո հաշիվների բացման և սպասարկման համար: ՀԿԴ-ի օպերատորների ցանկը ներկայացված է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am: Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել դրամային և դոլարային բանկային հաշիվներ (նման հաշիվներ չունենալու դեպքում):

Լրացուցիչ տեղեկությունների կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374 11) 700 100, 700 200 կամ «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարով՝ +(374 10) 54 83 87:

¹ Ազդագրով սահմանված կարգով և Թողարկողի ու Տեղաբաշխողի փոխադարձ համաձայնությամբ ամրագրվել է ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ներկայացվող հայտերը չեն բավարարվելու:

² Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: